nians in Nagorno-Karabakh, Azerbaijan then-Soviet Republic responded with brutal military force, committing mass ethnic cleansings, and continued atrocities aimed to forcefully squeeze out the Armenian population. The Armenians then withstood the imposed war and enjoyed 26 years of de-facto independence and peaceful life on their own Homeland amidst an enduring process of negotiations.

And now, the Turkish-Azerbaijan ongoing aggression the Armenians are exposed to are their genocidal intentions, leaving no alternative for the local population but to fight again to save their homes, families, thousands year old history and monuments.

Therefore, we are more than convinced that the international recognition of the Republic of Artsakh is the only option that might guarantee the security and the right of the Armenians living in Artsakh. So the political solution is clear: the only way to prevent the potential genocide and forced displacement of these people is the international recognition of their self-determination.

**Al-Jarida:** Are you optimistic about France and Russia and the United States upcoming meetings? Do you think the international intervention will help or complicate the situation?

### **the situation:**

OSCE Minsk Group co-chaired by France, Russia, and the United States was one of the factors of lasting peace-oriented to a peaceful outcome, which was blatantly disrupted by Turkey and Azerbaijan blowing up the Caucasus region on September 27, transferring mercenaries and radical jihadists to fight the Armenians.

Even though the joint statements of leaders of France, Russia and the United States to halt the violence immediately and back to the negotiation table, those were defiantly ignored not only by the Azeri government but first and foremost by Erdogan's Turkey, who bears responsibility for instigating and militarily involving in Azerbaijan's unleashed aggression against the Armenians of Nagorno-Karabakh. So, the only international intervention that not only complicated the situation but evoked an existential threat to the Armenians dramatically

**Continued on page 4**

## 43 Tons of Humanitarian Aid Transported From Los Angeles to Yerevan



YEREVAN — A Qatar Airways plane with 43 tons of humanitarian aid was transported from the USA to Armenia today at midday, Armenia's Civil Aviation Committee said.

The humanitarian assistance was collected by American Armenian and transported by ArmeniaFund, US partner of the Hayastan All-Armenian Fund.

The plane was originally to arrive in Armenia on October 15 from Los Angeles, however, Turkey closed its air space for it. Armenia's Civil Aviation Committee filed a complaint to the air navigation safety organization EUROCONTROL.

Tatevik Revazyan, the head of the Civil Aviation Committee, said the cargo transportation became eventually possible thanks to the tireless round-the-clock efforts of the Committee and the Armenian community of the United States.

"Today, the plane with humanitarian aid arrived in Armenia by crossing Turkish airspace," Revazyan said.

Earlier this month a shipment of 20 tons was sent to Armenia that included pharmaceuticals, medical and surgical supplies, portable X-Ray machines, hospital beds, sleeping bags, warm winter apparel and portable generators

## We Will Fight to Keep Armenia and Artsakh Free

**Continued from page 1**

rorist alliance." He charged that Ankara has been encouraging Baku to continue the hostilities as part of its "traditional genocidal policy towards our people."

In his televised speech, Pashinyan thanked Russia and Putin personally for their mediation efforts. "Russia has managed to properly perform its role as a co-chair of the OSCE Minsk Group and Armenia's strategic ally," he said.

## Armenia Calls for Wider Ban

**Continued from page 1**

seem to finally possess fragments of Bayraktar," he wrote on Facebook.

Pashinyan described the publicized photos as further proof of Turkey's "direct involvement" in the war. "Based on this fact, those countries that supply Turkey with necessary parts of Bayraktar should follow Canada's example and suspend further supplies," he said.

Armenia has also accused Turkey of deploying Turkish military personnel and Syrian mercenaries to Azerbaijan ahead of the war. The Turk-

ish and Azerbaijani governments deny that.

Baku has admitted heavily using Turkish as well as Israeli drones against Armenian targets. But it insists that they belong to and are operated by the Azerbaijani army.

According to exports data cited by the Reuters news agency, Turkey's military exports to Azerbaijan have risen six-fold this year, with sales of drones and other military equipment rising to \$77 million last month alone. Most of the purchased drones, rocket launchers, ammunition and other weapons were delivered after July.

## CBS Terminates Two Of its Employees Who Attacked Armenian Protesters



LOS ANGELES — CBS Entertainment Group President and CEO George Cheeks sent a letter to Armenian Council General in Los Angeles Dr. Armen Baibourtian, apologizing for an incident that happened at CBS lot in Los Angeles.

In the letter dated October 13th, the CBS president wrote:

Dear Honorable Ambassador Baibourtian:

I'm reaching out to you today regarding the pro-Armenian protests yesterday at CBS and to provide an update on two regrettable incidents that were brought to our attention. It's also my understanding that you visited the protest and talked briefly with our security officials.

As you know, video posted on

social media showed individuals entering our lot making hateful and offensive comments to the protesters. Two of these individuals have been identified as CBS employees.

Please be assured: this conduct does not align with the values of our company, and we condemn their language in the strongest terms. These incidents were investigated immediately, and as of last night, both of these individuals are no longer employed by CBS.

All of us here want you to know that we respect your right for peaceful protest, and we apologize to you and the Armenian community for this experience outside our facility.

Sincerely,  
George Cheeks

## Azerbaijan and Turkey Must Be Held Responsible

**Continued from page 3**

destabilizing the entire region is Turkey. And here is worth mentioning Turkey's Foreign Minister Chavushoglu's statement that his country will continue to stand by Azerbaijan on the ground and on the table, hence confirming Turkey's military involvement in this war. This fact should inherently raise a concern among NATO members that their ally is an initiator of aggression against its Partnership for Peace partner. With this regard, to my understanding, the imperative for the international stakeholders, particularly to those who are interested in long-term peace or in the conflict resolution namely France, the United States, and Russia and others, is to refrain Turkey, making both Ankara and Baku accountable and responsible for provoking this horrible war.

**Al-Jarida: Armenia is discontent with the US over the use of F-16s and with Israel over the weapon shipments to Baku, and Russia was very cautious about showing support to you, are you concerned that Armenia will find herself alone?**

President Sarkissian: The issue of Turkish F-16 in this war was raised by Armenia's Prime Minister Pashinyan, who eventually stated that the United States may want to explain whether those fighter jets were delivered to Turkey for bombing Armenian civilians. It is also about NATO since Turkey is a NATO mem-

ber and operates those F-16s. I have asked some NATO colleagues to look at this very carefully because we have a situation where a member of NATO – an organization, which has a clear mandate of what to do – is taking part or getting involved in a conflict of third parties, which are not NATO members. Does Turkey have an authorization or a green light from NATO? If yes, we should know that. If not, then I hope that our colleagues in NATO will make their voice heard and put pressure on Turkey that they should not get involved in this conflict because their presence here is not helping at all – it is escalating the situation dramatically.

On the other hand, the issue of Israel's continued arming of Azerbaijan has a long story, which remains confusing for the Armenian society. Even now, at times of the Turkey-Azerbaijan aggression against the Armenians, the Israeli government's unchanged behavior in arming the aggressor is far from understanding for the Armenian side, who asks a simple question: since the Jewish State is a Genocide-survivor country, so why are you arming those who wage genocidal war against Armenia? Armenia and Artsakh are not alone, as we are on the side of truth. As for the position of Russia, President Vladimir Putin made clear that Russia was and will keep its commitments as a bilateral and multilateral security treaty ally of Armenia under the terms and conditions of a strategic partnership with Armenia.



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com



# Քաղիքորնիոյ Ուսուցիչները Կ'ըսեն Քուէարկեցէք **PROP 15-ի Օգտին**

Թիւ 15 Օրէնքի Առաջադրանքը տանտէրները կը պաշտպանէ, նոյն ատեն փակելով առեւտրական սեփականութեան հարկի սողանցքները, որպէսզի մեծ ընկերութիւններուն վճարել տայ իրենց հաւասար բաժինը: Որպէսզի կարենանք ներդրում կատարել մեր տեղայն դպրոցներուն, համայնքներուն եւ մեր աշակերտներուն ապագային մէջ:

«Սի.Թի.Էյ.»ի Նախագահ Բ. Թոպի Պոյտ

**Խմացէք աւելին՝  
yes15.org  
կայքին վրայ**

Ծանուցումը վճարուած է Educators for Equity-ի կողմէ, Yes on 15 and 16,  
Sponsored by California Teachers Association.  
Յանձնախումը գլխաւոր ֆինանսատրումը  
California Teachers Association  
-ի կողմէ:  
Ֆինանսատրուածին մանրամասնութիւնները՝ [www.fppc.ca.gov](http://www.fppc.ca.gov) կայքին վրայ:

**CTA** CALIFORNIA  
TEACHERS  
ASSOCIATION

## Ակամայ Խոհեր Սոֆիա Լորէնի Նոր Ղերին Առթիւ Կամ «Հոլոքոսթ»ը Եւ Ռազմամթերքի Վաճառքը Ազրպէյժանին

«Դուք ալ (հայերդ) գենք ուզեիք, ձեզի ալ կը վաճառէինք...»  
(Հեղինակը Ազրպէյժանին գէնք ծախող երկրի կառավարութիւնն է)



ԴՈԿՏ. ՄԻՍԱՍ ԳՈՅԱՅԵԱՆ

Ո՞վ չէ հացած այս մեծանուն դերասանուհին շարժանկարներով։ Ան միշտ նոյն աստուածաւին շնորհքով կերտած է մեր լիշողութեան մէջ մնացած կերպարներ։ Բայց վերջերս, երբ իմացայ թէ ինք պիտի կատարէ «Հոլոքոսթ»էն վերապրած դժբախտ, բայց հերոսական հրեայ Մատամ Ռոզայի դերը, մէկ կողմէն լուռ համակրանք մը ունեցայ իր հանդէպ, միւս կողմէն վրովմունք մը թէ՝ իր եւ թէ՝ Netflix շարժանկարի ընկերութեան հանդէպ, հակառակ որ վերջինս այն ընկերութիւնն էր, որ թիկունք կեցած էր Ատոմ Եկոյեանի «Արարատ» շարժանկարին իրականացման (2002):

Նշուած շարժանկարը կը ներկայացնէ հրեայ կնոջ մը պատմութիւնը։ Ան կ'օգնէ պահել-պահանձնուելու մարմնավաճառութեան դատապարտուած եւ մեռած կանանց զաւակները՝ ստանձնելով անոնց ամբողջական հոգատարութիւնը։ Դիպաշարը (թիման) շատ յուզիչ է ի հարկէ։ Աննկարագրելի է մեր ուղեղին մէջ տեղաւորել այդ դժբախտ կիներուն տառապանքն ու խոշտանգումներու նկարգութիւնը։ Վատահաբար շատ

սիրտեր պիտի յուզէ ֆիլմը, մանաւանդ հայերուս միրտերը, որոնց ծնողները, մէծ մայրերն ու քոյլերը ու տեսած են ցեղասպանութեան արհաւիրքները եւ ականատես եղած հարազատներու բոնսաբարութեանց ու գերեվարութիւններուն։ Միջին Արեւելքի տարածութիւններուն մէջ թողլով հազարաւոր որբեր։ Ես ճանչցած եմ անոնցմէ մէկը, որ կ'ապրէր Պէյրութի Սանճագ հիւղաւանին (քէմփ) մէջ...»

Վատահաբար շարժանկարին հեղինակները, զուտ մարդկացին տեսանկիւնն մօտենալով հանդերձ, կարեւոր ընդգծումով մը պիտի շեշտեն Մատամ Ռոզայի հրեական Հոլոքոսթին վերապրած ըլլալու հանգամանքը եւ առիթ մը եւս պիտի ստեղծեն աշխարհի գութը շարժելու 20-րդ դարու երկրորդ ցեղասպանութեան զոհ գացած միլիոնաւոր հրեաներու հանդէպ։

Սա պահուս կը մտածեմ եւ կը զրեմ մէր հայրենի սահմաններուն եւ բնակավայրերուն վրայ թուրքագերի վոհմակներու գերազանց գէնքերով սանձագերծուած յարձակումներու տպաւորութեան տակ։ Ինչո՞ւ եւ ինչպէս կարենամ արդարացնելս նման շարժանկար մը չդիտելու ներքին պահանջքս։ Ի՞նչ ըսեմ ներքին ձայնիս, որ անընդ-

## Ամերիկեան Բարքեր

### Գեորգ ՔԵԾԿԵՐԵԱՆ

Անձանօթ Նուիրատուն . . .

Սեպտեմբեր 27, 2020-ի նախայարձակ Աստրպէյժանի կործանարար արարքը Արքախիի մէջ՝ ցնցեց ողջ հայութիւնը աշխարհով մէկ։ Զօրակցութեան եւ միասնականութեան կոչերը աննախընթաց կերպով ի մի հաւաքեցին ոչ թէ միայն Արքախիի եւ Հայաստանի հայութիւնը, այլև՝ բովանդակ սփիւռքի հայութիւնը։

Անապայու միասնակութեան այդ

կոչին եւ նիւթապէս սատարելու Արքախիի մէր հայրենակիցներու կենսական կարիքներուն, Արեւմտեան Ամերիկայի Համահայկական Հիմնադրամի կազմակերպած նուիրահաւաքին, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 10 Հոկտեմբեր 2020-ին։ մասնակցեցան բոլոր հայերը անխտիր։ Գոյացած գումարը գնահատուած է 30.5 միլիոն տոլարով։

Իսկ յաջորդ օր՝ Կիրակի, 11 Հոկտեմբեր 2020-ի յետ միջօրէի ժամը 3:00-էն սկսեալ, տեղի ունեցաւ «Ցաղթանակի Քայլարշաւ» դէպի Լոս Անձելըսի թրքական հիւպատոսարանը, որուն մասնակցեցան 150,000 պահանջատէր հայորդիներու։ Բողոքի խաղաղ այս ցոյցը հակապատկերն էր ցարդ տեղի ունեցած քաղաքական բնոյթ կրող միւս ցոյցերուն, որոնք ողողեցին ամերիկան մէկ ծայրէն միւս!»

Այս բոլորը մեզի՝ հայերուս համար, սրբազն պարտականութիւն էր եւ մենք չթերացանք բարոյական թէ նիւթական մէր աշակցութիւնը լիովին բերելու։ Սակայն ինչպէս գնահատել օտարի

հատ իր ասեղները կը խրէ մարմնիս մէջ եւ կ'ըսէ։ «Հոգեկան ի՞նչ հանգստութեամբ պիտի դիտես այս շարժանկարը, որուն սատար կեցողներէն շատերը շողոքութէն տառապած ազգի մը զաւակներն ու թոռներն են, բայց այսօր անոնց հայրենակիցները (Խարայէլ) զէնք կը ծախին մասու եւ կենաց անհաւասար մարտեր մղող բուռ մը ժողովուրդի թշնամիներուն, թշնամիներ, որոնք իրենք զիրենք պատուաւոր յետնորդները կը նկատեն մէր ազգին զինուն «Հոլոքոսթ» սարքած կայսրութեան յետնորդ թուրքիոյ եւ «Եղբար» պետութեան Ազրպէյժանին, ու տակաւին առասպելական

մը նիւթական ներդրումը, մահուկենաց մէր պահամութեան . . .

Արդարեւ, մէր պատմութեան հերոսը 70 տարեկան սեւամորթամերիկացի տնազուրկ մըն է որ Կլինտէլլ քաղաքի Broadway եւ Adams փողոցներու անկիւմը նատած մուրացկանութիւն կ'ընէ, տարիներէ ի եր: Գալով մէր պատմութեան հեղինակին, ան կ'ըսէ թէ խանութէ մը գնում կատարելէ ետք երբ դուրս ելած է՝ տեսած է այդ մուրացկանը եւ ուզած է օգնել իրեն:

Սուրացկանը սակայն կանխիելով զինք՝ ըսած է, «Ես կ'ուզեմ այս սուրճի գաւաթին մէջ հաւաքուած դրամը քեզի տալ, որպէսզի Արքախին նուիրես:» Բայց երբ հայուհին ազնութեամբ մէրժած է զինք, ան սպէս արտայայտուած է:

«Ես տասը տարիէ ի վեր կ'ապրիմ կլինտէլլի փողոցներուն վրայ: Մեծաւմասամբ հայերն են որ ինծի կու տան կերակուր, տաքովկ վերմակ եւ դրամ: Հայակական արիւնը պէտք չէ հոսի: Հաճիս առաջ դրամը որպէսզի ես կարենամ ինքինքս զգալ որպէս ապրելու արժանի մարդ արարած:»

Մեր հայուհին սկրջապէս առած է այդ գումարը եւ զետեղած խանութի մը Արքախիի համար բնորոշուած տուփին մէջ: Առաւել՝ այս գէպքը զետեղած է դիմատերի (Facebook) իր էջին վրայ, խնդրելով որ տարածուի եւ ընդհանուրին սեփականութիւնը դառնայ . . .

Եզրակացութիւն, սա մուրացկանին տուած գումարը՝ Սուրբ Գիրքի «Այրիին լուման» չի՞շեցնէր!

լիտիութեամբ կը ժպրհին մեզի դիմել «յաթաղանէ ազատածներ», կամ «ըրածնիս քիչ էր եւ պէտք է շարունակենք...» կոչերով:

Արեօք Սովիա Կորեն պիտի համանաց ցեղասպանութենէն ազատած աօր մը զաւկին եւ ցեղասպանութեան ամբողջ դառնութիւնը ճաշակած մէծ հայրերու եւ մարմրու թուան։ Մինաս Գումարեանի ապրումները այս ֆիլմին առթիւր...»

Յ.Գ. Մեր մեծերու խօսքերով՝ «ականջդ խօսի Գլուխա Գարտինալէ, որ հարազատ հայ մօր մը կերպարը ներկայացուցիր Հանրի Վէրնէօյի (Աշոտ Մալաքեան) «Մարկի» շարժանկարին մէջ:»

## Գեորգ Լ. ՔԵԾԿԵՐԵԱՆԻ «Հայկական Ասացուածքներ» Գիրքեր

Այս գիրքը կը պարունակէ թրքերէնի հայերէնի թարգմանուած 403 ասացուածքներ եւ թրքերէնի անդիրէնի թարգմանուած 186 ասացուածքներ:

Այս ասացուածքներուն բնագիրը թէեւ թրքերէն է, սակայն անոնք հայկական ասացուածքներ են՝ քաղուած կիլիկիոյ հայ բնակիչներէն, որոնց խօսակցական լեզուն եղած է թրքերէն մէջ զիրքին մէջ։

Գիրքին մէջ կան այրերու եւ կիներու տարիքներու նմանութիւնը բնորոշող երեւոյթներ, ինչպէս նաեւ հայկական առասպելներ ու մարդկացին տարիքներու յատկանիշները։ Այդ բոլորը թէ հայերէն եւ թուրքիոյ լեզուներով գրուած է գիրքին մէջ։

Այս գիրքը կարելի է ստանալ Ապրիլ գրատունէն:



<b>ՄԱՍԻՍ</b>		<b>ՇԱԲԱԹ</b>
<b>ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՒ</b>		
Yes, I wish to subscribe to Massis Weekly		
Enclosed a check for (one year)		
* \$50,00 * \$100,00 (first class) for USA		
\$ 125,00 (Air Mail) for Canada.		
\$ 250,00 (Air Mail) Overseas.		
Name: _____		
Address: _____		
City: _____ State: _____ Zip Code: _____		
Country: _____		
Tel: _____ Email: _____		

## Սրբոց Թարգմանչաց Վարդապետների Տօն

«ճանաչել Զիմաստութիւն եւ Զիրատ, Ինանալ Զբանս Հանճարոյ»



## ՊՈՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Հայոց «Առաքելական Եկեղեցի»-ն, «Եկեղեցւոյ Հայրերի» շարքին էր դասել Հոգբետոր, մշակովթային ու լուսաւորութեան գործի նուիրեալներ՝ «Թարգմանչաց» գործի հիշերին: Տարին երկու անգամ տօնախմբում են նրանց արեւալոյս յիշատակը: Յունիսի վերջին, Յուլիսի սկզբներին, Ամասունի իշխանների Օշական աւանում, յիշատակում են իմաստուն վարդապետներ՝ Սահակ Պարթեւի ու Մեսրոպ Մաշտոցի տօնը: Կրտաքանչիւր տարուայ Հոկտեմբերի 11-ին տօնախմբում են Սահակի ու Մեսրոպ Մաշտոցի թարգմանիչ աշակերտների՝ «Թարգմանչաց» տօնը:

Արմինա-Հայաստանում մարել էր յուշը՝ Արամէ արքայի տոհմից Սարտուրի Ա. թագաւորի որդի Անուշաւան-Իշպուխնի-ի։ Ասորեստանի արքունիքում պատանդ եղած ատեն շփուել էր պալատի գիտական-գրական շրջանակների հետ, ծանօթացել «Սեպագրութեան» արուեստի հնարքներին։ Խոսքով ու գործով հանձարեղ իշպուխնի-Անուշաւան թագաւորը նշանաւորուել էր որպէս իմաստուն քուրմ-արքայ։ Իր հանձարեղ մտայլացումով, Ասորեստանի 3000 սեպագիր խրթին գրերի նշանների համակարգը խիստ կրծատել էր, ապա ստեղծել իր թագաւորած երկրի մայրենի լեզուի միայն վեց հարիւր սեպագիր նշանակագրերով տարբերակը։ Իշպուխնի թագաւորը, Արմինա երկրի նախնիների խօսակցական լեզուն վերածել էր գրաւոր լեզուի։ Իշպուխնին ու նրա յաջորդ գահակալները, այդ նոր սեպագիր գրերով էին իրենց նուաճումների արձանագրութիւնների լեզուն՝ Ասորերէնի փոխարքէն սեպագրել երկրի մարդկանց խօսած լեզուով։ Այդ այն լեզուն էր, որ հազար-հազար տարիներ յետոյ էլ Արմինա երկրի մարդիկ պիտի խօսէին։

Մարել էին նաեւ Արմինա  
երկրի նախնիների հաւատքի գե-  
րազոյն աստուծոյ ատենադպիր,  
արուեստների, գիտութիւնների,  
դպրութիան, զրի հովանաւոր Տիր  
աստուծոյ ուսմունքի լուշը: Ասա-  
ցէ՞ք, ատենադպիրը առանց զրերի  
կը լինէ՞՞՞ : Արմինա երկրի  
մարդկանց բանաւոր խօսքը՝ «Գրա-  
բար» ուկեղենիկ Հայերէն լեզուն  
էր: Դպրոցներում ուսուցանել էին  
Յունարէն, Ասորերէն, Պարսկերէն  
լեզուներ:

Հայոց Խոսրով Երրորդ թագաւորի ատեն արքունիքում ծառացել էր Մեսրոպ անունով մի գեղջուկ Արմին-Հայ մարդ, որը 361 թուականին ծնուել էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղում, որդին Վարդան անունով մարդու: Մանկութեան հասակում լաւ կրթութիւն էր ստացել, ուսանել Յունացին, Պարսկերէն, Ասորերէն լեզուներ, Երեխ Ներսէս Մեծ կաթողիկոսի հիմնադրած դպրոցներից մէկի աշակերտն էր Եղել: Ծննդավայրի ուսումը աւարտելուց յետոյ զնացել Ալրարատ նահանգ, արքունիքում զինուորական ծառայութեան մատել: Ժամանակի հանրաճանաչ լեզուներին տիրապետող տարօնցու հոգում չէր մարել զրասիրութիւնը, ջանասէր աշխատասիրութեան շնորհիւ դարձել թագաւորական զիւանի դպիր-զրափիր: Արքունիքում ծանօթացել էր աշխարհիկ կարգերի հետ, գրագրի պաշտօնով վարչական աշխարհն էր իր համար բացուել: Տարօնցի Մեսրոպի համար Երկրի քաղաքական ու ներքին կեանքը ճանաչելու լաւ առիթ էր այն հանդիսացել: Պալատում պաշտօնավարութիւնը չէր կարողացել բռնադատել Մեսրոպի հոգին: Նոյն Խոսրով թագաւորի ատեն, նորէն ասպարէզ էր ելել Լուսաւորչի տոհմը, կաթողիկոսական աթոռին բազմել էր Ներսէս Մեծի որդի՝ Սահակը: Նրա վարած ճնաւորական կեանքը մեծ ազդեցութիւն էր գործել արքունի զիւանի

Դպիրի վրաց։ Մեսրոպ թողել էր  
դպիրի պաշտօնը, հոգեւորականի  
կոչում ստանալով սկսել ճգնաւո-  
րական կեանք վարել։

Մեսրոպ ճգնաւորը չէր հեռա-  
ցել աշխարհից, մարդկանցից, աղօթ-  
քով հոգու փրկութիւն չէր որոնել:  
Հաւաքել էր աշակերտներ, նրանց  
միտքը լուսաւորելու համար գրիս-  
տոնէութիւն քարոզել: Խորենացին  
վկացել էր, որ Մեսրոպը եկեղեցի-  
ներում կարդացել էր Ասորեկէն  
գրքերից, յետոյ էլ այն Հայերէն  
թարգմանել: Մեսրոպը, իր առա-  
քելութիւնը իրականացրել էր  
նաեւ Հայոց աշխարհի արեւելեան  
ծայրամասի գաւառներում, որտեղ  
անկարգ վիճակ էր տիրել: Սիւնիքի  
ու Արցախի լեռների անմատչելի  
բարձրութիւնները, կլիմայական  
խիստ պայմանները բնակիչների  
համար մեկուսի վիճակ էին ստեղ-  
ծել, պահպանել էին իրենց հնա-  
պաշտ աւանդութիւնները: Նման  
պայմաններում պայքարել էին  
իրենց ապրուստը հոգալու, մտա-  
ւոր կեանքի պահանջ չէր եղել:  
Սիւնեաց աշխարհի Գողթան գա-  
ւառ, նրա մարդկանց միտքը պայ-  
ծառ ու լուսաւոր էր եղել, հաւա-  
տարիմ էին մնացել իրենց հին  
աստուածների հաւատքի իմաս-  
տութեանը, իրենց հին աստուած-  
ների բնութեան պաշտամունքին:  
Գողթան գաւառը, նախնիների աստ-  
ուածների պաշտամունքի աւանդա-  
պահն էր: Նրանց բանաստեղծական  
յօրինումներում Արմին-հայէրի  
իմաստութեան լույս էր ճառագում:

Այն զերածում էր երգի, պահում  
իրենց անցեալը, չէր թողնում մեռ-  
նէր իրենց նախնիների յուշը: Մով-  
սէս Խորենացին, Նրանց եգիրի ու  
բանահիւսութեան մի քանի պատա-  
ռիկներ էր հաղորդեկ՝ Արտաշէսի ու  
Սաթենիկի ամուսնութեան հանդէս,  
Վահագնի ծնունդ...: Վանայ ծով,  
շրջակաց լեռների գագաթների հրա-  
բուխներից ժայլթքած կրակալոյսը  
իջնում ջրեր, երկնում էր երկինքը,  
երկնում էր երկիրը, երկնում էին  
հրաբխնացին գօտի կապած վանայ  
ջրերը, երկունք բռնած կարմրալոյս  
եղեցիներից ելած բոցից ծնունդ իրենց  
Վահագն աստուած՝ կրակից ու  
ջրից ծնունած Հայ նախնի աստուած  
... պատառիկներ էր փրկել Մովսէսը,  
հապա եթէ նրանց այլրած շլինէին...  
բանաստեղծութեան ինչքան գոհար-  
ներ կը նորուրէինք աշխարհին:

Սեսրոպ... այդ լեռներում դիմագրաւել էր իրենց նոր հաւատաքի քարոզչութեան անհնարինութիւնը, դիմել տեղի իշխանների աջակցութեանը: Կորիւն այսպէս էր գրել՝ «Այն ժամանակ Աստուած տուեց, որ Սիւնիքի իշխանութեան գլուխն անցաւ քաջ Սիսական Վասակը, խելացի ու հանճարեղ եւ կանխագէտ, աստուածացին իմաստութեան շնորքով օժտուած մի մարդ, նա շատ նպաստեց աւետարանի քարզ-չութեանը»: Քրիստոնէութեան քարոզչութիւնը կատարուել էր հրամանով, զինուժի իշխանութեան պարտադրանքով: Նրանից հարիւր տարիներ առաջ էլիշխանական զօրութեան բռնի ուժով Արմինա-Հայաստան երկրում իշխել էր օտար հաւատքը: Հայք երկրի մարդիկ, իրենց հաւատքի պաշտպանութեան համար հարիւր տարիներ կուի էին տուել իշխանութեան բռնութեանը, պարտուել էին, սպաննել, դաւանափոխ արել քրմական դասին, քանդել նրանց աստուածների մեհեանները, յափշտակել տեղի գանձերը, ոչնչացրել զիր, երդ, աշխարհի ու տիեզերքի ընկալման իմաստութեան մատեաններ: Կրօնափոխ էին արել Հայքին, հաւատքն էր օտար, թագաւորն

ԵՐ օԿՆԱՐ...

Վլամ Շապուհ արքան, Մի-  
ջագետքում Պարսկաստանի ու Բիւ-  
զանդիոնի միջեւ Հաշտարար առա-  
քելութեան ատեն նրան Հաղորդել  
էին, որ մի Ասորի Դանիել եպիս-  
կոպոսի քով «Հայերէն» տառեր  
կալին: Հայ պատմագիրներ աւան-  
դած չէին եղել այն, պարզ չէր  
նաեւ, որ մինչեւ Մեսրոպի ատեն  
Հայերէն «Այբուբեն» եղել էր թէ  
ոչ: Սահակ կաթողիկոսի ու Մեսրո-  
պի խնդրանքով թագաւորը Վահ-  
րիճ անունով մի պաշտօնեալի մի-  
ջոցով Դանիէլի մօտից բերել էր  
տուել այդ տառերը: Երեխաներ  
էին հաւաքել, բացուել էր առաջին  
դպրոցը, Հայոց առաջին ուսուցիչ  
Մեսրոպը «Վարժապետ» դարձել,  
սկսել մայրենի լեզու սովորեցնել:  
Մեսրոպը եզրակացրել էր, որ Դանի-  
էլի տառերով Հայերէն լեզու սովո-  
րեցնել հնարաւոր չէր: Մեսրոպ ու  
Սահակ անկարող էին եղել յաղթա-  
հարել այդ վիճակը, Վաղարշապա-  
տում ոչ ոք կարողացել էր օգնել:  
Մեսրոպ մտածել էր, որ եթէ տե-  
ղում յաշողութիւն չէր գտել, յար-  
կաւոր էր այն որոնել օտար երկր-  
ների գրապահոցներում, կամ էլ  
ինք յօրինէր տառեր:

Մեսրոպ... մի քանի աշակերտ-ների հետ մեկնել էր երկրից դուրս: Վուած շապուհ թագաւորը ու Սահակ կաթողիկոսը բարի մաղ-թանքներով ճանապարհել էին նրանց: Գնում էր «Օսրոյնէ» ասո-րական պետութեան Եղեսիա ոս-տան: Հանդիպել էր նշանաւոր հո-գեւորականների հետ, բարեհաճ ըն-դունելութիւն գտել: Աշակերտնե-րի մի մասին Եղեսիա թողել Ասո-րերէն սովորելու, մի մասին էլ իր հետ Սամոսատ տարել Յունարէն ուսանելու: Մեսրոպի աշակերտի «Վարք Մաշտոց»-ի գրքի յեղինակ Կորիւնը նկարագրել էր նրա հոգե-կան ու մտային տուայտանքը: Մես-րոպի նպատակին հասնելու ան-դաղրում նուիրումը հոգում տե-սիլնելքների լոյսի շանթեր էին յառնել, մտքի ոգեղին զօրութիւնը պատկերել էր տարիների խորհուր-դը: Հոգում երկունք էր, պատին զամուած մագալյաթում իրենց Տիր աստուծոյ չնորհած գրերի լոյսն էր շաղում... Արմին-Զայը գիր ունէր, որը իր ցեղի մտքից ճառագած լոյսն էր աշխարհներ տանելու: Կորիւն ու Զայ մատենագիրներ այն համարել էին աստուածային հրա-շապատում... քրիստոնէական հա-ւատքի անիրական բացատրութիւնն էր այն, ամէն արտասովոր բան համարել էին երկնային հրաշք: Աշխարհում հրաշքներ չեն լինում, աստուածային ոչինչ, ամէն ինչ մարդկային բանականութեան ու ընութեան անհնդատ ինքնափոփո-խութեան ին օնասառառու մն է:

Հատ պատմաբան Լէօ-ի, Մես-  
րոպի արարած Հայոց այբուբենի  
որոշ տառեր Յունականի նմանու-  
թիւն ունէին, նրանք դասաւոր-  
ուած էին Յունականի նման, գրում  
են ձախից աջ: Մեսրոպի մեծու-  
թիւնը չէր նուազել, եթէ նրա  
արարած այբուբենի տառերը նմա-  
նութիւն ունէին ուրիշ ազգերի  
տառերի հետ, որը իր ժամանակին  
ընդհանուր երեւոյթ եղել: Հայ-  
քում, բազում բարբառներով զա-  
տորոշուած ընդհանուր Հայերէն  
լեզու էր, իւրաքանչիւրը հնչիւնա-  
յին առանձին արտայատութիւն-  
ներով: Մեսրոպ գտել էր նրանց  
հնչիւնակին ընդհանուր յատկու-  
թիւնները, իւրաքանչիւր տառան-  
շանին նուիրաբերել մի յայտնի

# Քաղիքորնիոյ Դաստիարակները Կ'ըսեն Քուէարկեցէք

# Այս Prop 16ին

Անցընելով Prop. 16ը՝ մենք պիտի կարենանք արգելք հանդիսանալ խորականութեան եւ բոլորին համար վերահաստատել հաւասար հնարաւորութիւններ:

Դաստիարակներ կը հաւատան, որ ամէն անձ, անկախ իր ցեղային եւ սեռային պատկանելիութենէն, արժանի է յաջողութեան հաւասար իրաւունքի: Հաճեցէք միանալ Քաղիքորնիոյ դաստիարակներուն՝ քուէարկելով Այս Prop. 16ին՝ կառուցելու ուժեղ տնտեսական ապագայ մը կիներուն եւ ոչ-սպիտակամորդ համայնքներուն համար:

СТА-ի նախագահ Է. Թոպի Պոյտ



Իմացէք աւելին՝  
**VoteYesOnProp16.org**  
կայքին վրայ

Ծանուցումը վճարուած է Educators for Equity, Yes on 15 and 16. Sponsored by  
California Teachers Association: Յանձնավորմի գլխաւոր ֆինանսատրումը՝  
California Teachers Association  
-ի կողմէ:  
Ֆինանսատրուման մանրամասնութիւններ՝ [www.fppc.ca.gov](http://www.fppc.ca.gov) կայքին վրայ:

**CTA** CALIFORNIA  
TEACHERS  
ASSOCIATION

## «Ռոման» Յաղթեց, Միջիարեանը կատարեց 2 Կոլային Փոխանցում



Իտալիոյ առաջնութեան չորրորդ օրուայ մրցումներու ընթացքին «Ռոման» սեփական խաղաղաշտին վրայ մրցեցաւ «Պենելենտոյի» հետ եւ առաւելութեան հասաւ 5:2 հաշուով:

Մայրաքաղաքային խուբածի կազմին ներս ամբողջ հանդիպումն մասնակցեցաւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիի Միջիթարեանը, որ դարձաւ երկու կողային փոխանցման հեղինակ: Երկու պարագային ալ անոր փոխանցումներէն յետոյ աչքի ինկաւ պոսնիացի յարձակող կդին ջեկոն:

Առաջին խաղակէսի աւելացուած ժամանակին Հենրիի Միջիթարեանը դրաւեց մրցակիցի դարպասը, սակայն VAR-ի միջամտութեամբ դրանցուեցաւ խաղին դուրս վիճակ:

«Ռոմայ» կազմին մէջ կոլ նշանակեցին նաեւ սպանացի յարձակող Պեդրո Ռուդրիգեսը, ֆրանսացի կիսապաշտպան ժորդան Վերետուն եւ պրազիլացի պաշտպան Պրունո Բերեսը:

«Ռոման» 7 միաւորով 7-րդ տեղը կը գրաւէ: «Պենելենտոն» 10-րդն է, 6 կէտով:

## Իբրահիմովիչի Երկու Կոլերը Յաղթանակ Պարգևեցին «Միլանին»՝ «Ինտերի» Յետ Խաղին

Իտալիոյ առաջնութեան չորրորդ խաղաշանի Միլանի «Սան Միլո» խաղաղաշտին վրայ տեղի ունեցաւ 2020/21 մրցաշանի առաջին միլանեան ճակատումը:

«Միլանը» շուետ յարձակող Ջլատան իբրահիմովիչի երկու կրկուն շնորհիւ հասաւ յաղթանակի 2:1 արդիւնքով: «Ինտերի» միակ կոլը նշանակեց պելճիգացի յարձակող Ռոմելու Լուկակուն:

Ա Միլիայի չորրորդ խաղաշանէն յետոյ «Միլանը» 12 միաւորով առաջատար է, «Ինտերը» ունի 7 միաւոր եւ 6-րդ տեղը կը գրաւէ:



## Գուարդիոլագ Շատ Կարեւոր Յաղթանակ Էր

Անգլիոյ փոխախոյնեան «Մանչեսթեր Միթիի» կատալոնացի գվասաւոր մարզիչ Խոսեպ Գուարդիոլան մէկնաբանած է 1:0 հաշուով յաղթանակը Լոնտոնի «Արսենալի» նկատմամբ Պրեմյեր լիկայի 5-րդ օրուայ տնային խաղի ընթացքին:

«Սա շատ կարեւոր յաղթանակ է մեր խումբի համար՝ հաշուի առնելով նաեւ այն, որ կոլ բաց չխողեցինք: «Արսենալի» խաղաղողները պայքարի ընթացքին, յաղթելու ցանկութիւն ունէին եւ կը ձգտէին անոր:

«Գիտէինք, որ լարուած եւ բարդ հանդիպում պիտի ըլլայ, բայց մեզի համար կարեւոր են յաղթանակները նաեւ վստահութեան եւ տրամադրութեան տեսանկիւնն զիտուած», Գուարդիոլայի խօսքը կը մէջբերէ ակումբի մամուլի ծառայութիւնը:



«Մանչեսթեր Միթին» 4 խաղին յետոյ 7 միաւորով 9-րդ տեղը կը գրաւէ:

## Ազգերու Լիկա. Հայաստան-Էստոնիա՝ 1:1



Հստոնիայի մայրաքաղաք Թալլինի մէջ տեղի ունեցած հանդիպումին սկզբնական շրջանին Հայաստանի հաւաքականը գործոն խաղ չէր ցուցաբերէր եւ կարծես կը սպասէր իր առիթին, որ ունեցաւ եւ օգուագործեց 8-րդ վայրկեանին: Տիգրան Բարսեղեանի փոխանցումէն յետոյ զազախական «Կայրաթի» պաշտպան Կամօ Ցովհաննիսեանը գլխու հարուածով բացաւ հաշիւը խփելով իր առաջին կոլը Հայաստանի հաւաքականի կազմին մէջ:

Հստոնացիներու պատասխանը չուշացաւ: Եվ վայրկեան անց դաշտի տէրերը նշանակեցին պատասխան կոլը: Անկիւնացինի խաղարկման արդինքի ընթացքին աչքի ինկաւ հստոնական «Ֆլորայի» յարձակող Ռաուն Սապինենը՝ 1:1:

Առաջին խաղակէսի վերջաւորութիւնը անցաւ լարուած պայքարով եւ խումբերը ընդիջման գացին 1:1 հաշուով:

62-րդ վայրկեանին հստոնացիները ունեցան եւս մէկ վտանգաւոր պահ, որ չկարողացաւ օգտագործել Վասիլի Սինյավսկին:

Վերջաւորութեան հստոնացիները յաջողեցան ստեղծել եւս մի քանի վտանգաւոր պահեր, իսկ հիւրերու մօտ առջեւի գիծին վրայ ոչ մէկ վտանգաւոր շարժում չէր նկատուեր: Հանդիպումը աւարտեցաւ 1:1 հաշուով:

Խմբակի միւս խաղի ընթացքին Հիւսիսային Մակեդոնիայի եւ Վրաստանի հաւաքականները ոչ ոքի խաղցան Սկոպյի մէջ՝ 1:1: Մակեդոնացիները աւելցուած ժամանակի ընթացքին պարտութենէն փրկուեցան 10 խաղացողներով մնալէ յետոյ:

Չորս մրցումներէ ետք Վրաստանն ու Հիւսիսային Մակեդոնիան ունին 6-ական միաւոր, Հայաստանը՝ 5, իսկ հստոնացիները՝ 2:

Յայտնենք որ, Հայաստանի հաւաքականը Ազգերու լիկայի իր խմբակին ներս խաղցած էր նաեւ Վրաստանի հաւաքականի հետ:

Հայաստանի մէջ ուազմական դրութեան պատճառով Լեհաստանի Տիխի քաղաքին մէջ կատարուած խաղի ընթացքին սպանացի գլխաւոր մարզիչ Խոպկին կապառուի ղեկավարած խումբը դարձեալ բաւարարուեցաւ ոչ ոքի արդիւնքով՝ 2:2:

Ալեքսանդր Կարապետեան. Այսօրուայ Կոլս Նուիրում Եմ Հայրենիքի Համար Մարտնչող Եղբայրներուս

Հայաստանի հաւաքականի եւ «Տամբովի» յարձակող Ալեքսանդր Կարապետեանը Ռուսաստանի առաջնութեան 11-րդ շրջանի ընթացքին «Ռոտորին» խփած կոլը նուիրած է Արցախի մէջ թուրք-ատրպէճանական յարձակման դիմակայող հայրենակիցներուն:

«Ալարուաց կոլս նուիրում եմ բոլոր իմ եղեացներուն Հայաստանի մէջ՝ անոնց, որոնք կը մարտնչին հայրենիքի համար: Իմ եղեացներ, այս ձեզ հաճելի բան անելու փոքր փորձ է:

«Ձեզ մաղթում եմ գերազանց ծառայութիւն: Բոլորդ հերոս էք: Հայաստանը հպատանում է ձեզնով», Կարապետեանի խօսքը կը մէջբերէ Sport24-ը:



Պաքուն Կրնայ Զրկուիլ Եւրո-2020-ի Խաղերը Հիւրընկալելու Իրաւունքէն


Պաքուն ու Սանկտ Պետերբուրգը կրնան զրկուիլ Եւրո-2020-ի հանդիպումներ հիւրընկալելու հնարաւորութենէն: ՈւեֆԱ-ն կը քննարկէ Եւրոպայի առաջնութեան քաղաքներու թիւը կրծատելու տարրերակը: Ատրպէճանակ մայրաքաղաքը անոնց մէջ է, կը գրէ The Sun-ը:

«Պաքուն վտանգ կը սպառնայ, քանի որ երկիրը պատերազմի մէջ է Հայաստանի հետ», կը գրէ բրիտանական պարբերականը:

Ռուսաստանի Սանկտ Պետերբուրգ քաղաքը իր հերթին կրնայ Եւրո-2020-ի հանդիպումներ հիւրընկալելու հնարաւորութենէն զրկուիլ երկրին մէջ քորոնա ժահը տարածման պատճառով:

Աւելի վաղ ՈւեֆԱ-ի նախագահ Ալեքսանդր Զեֆերինը չէր բացառած, որ Եւրո-2020-ը հիւրընկալու գաղաքներու թիւը կը հանարկանալ:

ՄԱՐԱԶԴ



# ՆՈՒՊԱՐ ՄԻՒԹԱՐԵԱՆ

## 1933-2020

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր ամուսնոյն, հօր, հօրեղբօր եւ հարազատին՝ Նուպար Մխիթարեանի մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 6 Հոկտեմբեր, 2020ին, յետ երկարատեւ հիւանդութեան։  
Թաղման կարգը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 23 Հոկտեմբեր, 2020, առաւօտեան ժամը 10:00ին Live Oak գերեզմանատան մէջ, 200 E. Duarate Road, Monrovia, CA

Սպակիրներ՝  
Ալբին, Տիկ. Քնար Նազարեան Մխիթարեան  
Զաւակը, Պրն. Գաբրիէլ Մխիթարեան  
Զաւակը, Տէր եւ Տիկ. Արա եւ Ժագլին Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Նազարէթ եւ Մարալ Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Սուրէն եւ Սապրինա Մխիթարեան Ֆրանսա  
Տէր եւ Տիկ. Ցարութ եւ Շաքէ Թումայէան  
Տէր եւ Տիկ. Ցովսէփ եւ Մարօ Շորձեան  
Տէր եւ Տիկ. Վաչէ եւ Տիգրանուհի Սարգիսեան  
Տէր եւ Տիկ. Լէրի եւ Մատլէն Պարնէթ  
Տէր եւ Տիկ. Գաբրիէլ եւ Վերժին Մխիթարեան  
Տիար Արթիւր Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Ժողէֆ եւ Ճելլա Գարամեան  
Տիկ. Մարի Սոլաքեան  
Օր. Սոչի Սոլաքեան  
Տիար Կարօ Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Պետրոս Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Պողոս Մխիթարեան  
Օր. Սոնա Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Աւետիս եւ Ժիւլիէթ Մխիթարեան եւ  
թոռնիկները  
Տէր եւ Տիկ. Նուպար եւ Շըրիմ Մխիթարեան  
Տէր եւ Տիկ. Սեւակ եւ Անօ Մխիթարեան  
Օր. Թանիսա Մխիթարեան  
Ալեք Մխիթարեան  
Արթիւր Մխիթարեան  
եւ Համայն Մխիթարեան, Նազարեան, Այզաքեան, Աւետիքեան  
ընտանիքներ:

## Վճռական Գործողութիւններն

## Ծարունակուած էջ 2-էն

Ճեւաչափի՝ Մինսկի խմբի անդամի  
չէզոք դիրքերից:

իրանն ամրացնում է իր հիւ-  
սիսը եւ հետեւում հայկական գոր-  
քերի հերոսական կուիւներին: Մեր  
հարեւանը երկրի ղեկավարի միջո-  
ցով արդէն յայտարարել է, որ  
կիրակի օրուանից կարող է իր  
զէնքը վաճառել ցանկացողներին:

իսկ արցախեան ճակատում  
ատրպէցձանաթուրքական կոսալից-  
իան յամառօրէն չի ցանկանում  
կատարել հրադադարի պահպան-  
ման ուեժիմի շուրջ ձեռք բերուած  
պայմանաւորուածութիւնները՝  
ձգտելով իր համար աւելի բարեն-  
պաստ դիրքեր ունենալ: Վերջինս  
փորձում է ամէն զնով գրաւել  
Հաղըրութը՝ ամէն օր ացնտեղ ու-  
ղարկելով զբալի մարդկային ու-  
ժեր եւ կորուստներ կրելով՝ հետ է  
շպրտում ելման դիրքեր: Թշնա-  
մին շարունակում է յարձակում-  
ներ կատարել նաեւ ուազմաճակա-  
տի միւս ուղղութիւններով:

Այսօր համաշխարհային համ-  
րութեան առաջնային խնդիրն  
աստրապէցանաթուրքական կոսլից-  
իային Մոսկովացում հրադադարի  
ռեժիմի ստանձնած պարտաւորու-  
թիւնների կատարումը պարտադ-

բելն է, քանի որ պատերազմի շարունակութիւնն անխոսափելի-օրէն կը ներգրաւի տարածաշրջա-նի առ եռկոնների. եւ առուածու-

սրա այլ սրբունը, և լարուածութ-  
թիւնը դուրս կը գայ Կովկասից:  
Սակայն թշնամին անտեսում է  
Ճիշճագային կառուցցների եւ պե-  
տութիւնների բոլոր յորդորները:  
Թշնամու այս վարքը կան-  
խատեսելի էր: Այս պահին հակա-  
ռակորդը դիւանագիտական լե-  
զուն չի ընդունի: Միանշանակ է,  
որ այսօր ուազմաճակատում հրա-  
դադարը հնարաւոր է ապահովել  
միայն հայկական ուժերի առաջ-  
խաղացման միջոցով: Երկարատեւ  
դիրքային պատերազմում ատր-  
պէջանաթուրքական ուժերը չեն  
գնայ հրադադարի՝ հետեւողակա-  
նորին ոչնչացնելով իրենց համար  
գրոշի արժէք չունեցող սեփական  
զինուորներին, ել չենք խօսում  
ահաբեկիչ վարձկանների մասին:  
Հետեւաբար, մեզ համար աներկ-  
բայ է, որ թշնամու ողջախորհու-  
թեանը սպասելն անիմաստ է, ուս-  
իւն է առ առ առ առ առ առ:

## Ք վճարելու:

### «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»

## Սրբոց Թարգմանչաց Վարդապետների Տօն

## Ծարունակուած էջ 16-էն

Հայոց լեզուն ամբողջութեամբ արտայայտել գրերի մէջ։  
Տաւերում իր ցեղի մտքից լորդած ոգու ճիշն էր, տառեր, որոնք իրենց ցեղի հերոսների ոգու հետ այն տարել ու տանելու են հազարամեկներ։ Ահա Մեսրոպի կողմից արարուած համարուած հետեւալ 14 տառերը՝ ը, ժ, լ, խ, ծ, հ, ձ, ճ, չ, զ, ջ, կ, ը, ց

Սեւրոպ գնացել Եղեսիայի  
Սամոստ քաղաք, Հոռովհանոս անու-  
նով Յոյն գծագրողի հետ վերջնա-  
կան ձեւ տուել Հայերէն տառերին։  
Ինքն էր առաջինը փորձել իր  
արարումը, «Աստուածաշնչի Սո-  
ղոմոնի Առակներ»ի առաջին տողը  
թարգմանելով գրել՝ «Ճանաչել զի-  
մաստութիւն եւ զիսրատ, իմանալ  
զբանս հանճարոյ»

**Մեսրոպ վերադարձել էր Վաղարշապատ-Ղաղարշապատ-Էջմիածին, ամբողջ Արմինա-Հայաստանն էր ցնծագին դիմաւորել նրան, Սահակ կաթողիկոսին ու Վռամ Շապուհ արքային մատուցել Հայոց ՅԵ գրերը պատկերած մագաղաթը:** **Մեսրոպին յանձնարարել էին դպրոցներ բացել, մանուկներին Հայոց գիր ու լեզու ուսուցանել, ցեղի առաջին վարժապետը եղեւ։ Իրենց նախնիների փլած մեհեանների տեղերում դպրոցներ էին պատել, որոնց որմերից ճառագում էր լոյսը իրենց հին հաւատքի, խօսքի մրմունջները իրենց նախնիների դպիր-քուրմերի։ Մանուկներին բերել դպրոցներ, հայոց աշխարհը «Այր, բեն, գիմ» էր կանչում, նորէն դպրութիւն պիտի լինէր, իրենց Աստուածի պաշտամունքի խօսքն էին քարոզելու։ **Մեծացան առաջին դպրոցականները, առաւել իմաստուններին հաւաքել էին պալատ։ Սահակ կաթողիկոս ու Վռամ Շապուհ արքայնացից՝ Մովսէսին, Ղեւոնդին, Եղիշէին, Կորիւնին, Եգնիկին, Դաւիթին, Յովնանին, Յովսեփին, եւ ուրիշ շատերին ճամբել էին Բիւզանդիա, Օսրոյնէ-Եղեսիա, Պոնտոս, հեռու Աղեքասանղրիա, Յովնարէն, Ասորերէն ուսանելուց յետոց վերադարձել Վաղարշապատ-Վաղարշապատ-Էջմիածիածի։****

Կեսարիա ուսանած Սահակ  
Պարթեւ, անչափ զարգացած մարդ  
կաթողիկոսը, որը գիտակ էր Ասո-  
րերէն, Պարսկերէն ու Յունարէն  
եւ անշուշտ Հայէրէն լեզուներին։  
Մեսրոպ զբաղած էր դպրոցաշի-  
նութեամբ, Սահակը, արտերկր-  
ներում ուսանած աշակերտների  
հետ գլխաւորել Սուրբ գրոց ու  
քրիստոնէութեան Մատեանի  
թարգմանութիւնը։ Սկզբում այն  
թարգմանել էին Ասորերէն լեզուի  
բնագրից, սակայն այն կատարեալ  
չէր համարուել։ Երկար տարինե-  
րի տքնանքով սկսել էին Յունա-  
րէն բնագրից այն թարգմանել։  
Կատարեալ Հայէրէն էր այն, Հա-  
յոց լեզուի քերականութիւնը, շա-  
րադասութիւնը, ուղղագրութիւնը  
այնտեղ էին սկզբնաւորուել, Եւ-  
րոպական գիտնականներ այն հա-  
մարում են «թագուհի թարգմա-  
նութեան»։

Սեպտիմիոսը առաջանած աշակերտները վերադառնալով յունական ու ասորական մշակոյթի ուսումնական կեղղոններից նաեւ կատարել են գրական, գիտական, պատմական, արուեստաբանական, փիլոսոփայական բազում երկերի թարգմանութիւններ, «Սրբոց Թարգմանիչներ» էին անուանել

Նրանց, սրբացրել նրանց: Թարգմանութիւնը գրական ստեղծագործութիւնն է, որը մի երկը վերստեղծում է մի այլ լեզուով: «Սրբոց թարգմանիչներ» կորիւն, եղիշէ, Յովսէփ, Յովնան, Ղեւոնդ, եղնիկ, Դաւիթ Անյաղթ, Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի, Ագաթանգեղոս, թարգմանիչներն, հայցըրին յունական, ասորական բազում երկեր, որոնց մի մասը անհետացած լինելով, համարում են բնօրինակներ: «Սրբոց թարգմանիչներ»-ը ոչ միայն թարգմանեցին, հայցըրին յունական, ասորական բազում երկեր, որոնց մի մասը անհետացած լինելով, համարում են բնօրինակներ: «Սրբոց թարգմանիչներ»-ը ոչ միայն թարգմանեցին ուրիշ ազգերի մեծերի երկեր, այլ նաև իրենց արմենական հանճարի պոռթկումների լոյսով արարեցին Հայոց Ոսկեղենիկ լեզուով հրաշալի երկեր՝ Եղիշէի «Վարդանի ու Հայոց Պատերազմի Մասին» արձակ բանաստեղծական երկը, եղնիկի «Եղեծ Աղանդոց» քրիստոնէական հաւատքի փիլիսոփայութեան ճմշարտութեան բոլոր ժամանակների ամենազորեղ իմաստաւորումը, կորիւնի «Վարդ Մաշտոցի» իր Երանելի Մեսրոպ Վարդապետի հանճարի պոռթքումի փառաբանումը: Հապաւ, Մովսէս Խորենացու «Հայոց Պատմութիւն» մատենակի պատումը որպէս՝ իր քաջ ազգի խոհանակութեան ու Հայոց աշխարհում լիշտապահութեան արժանի քաջ գործերի մասին հաւասարութեան մինչեւ 428 թուականի Արշակունի թագաւորութեան անկումը: Խորենականի խնդրանքով, իր ցեղի ծագման ժամանակներից մինչեւ 428 թուականի Արշակունի թագաւորութեան անկումը: Խորենացին մահացել է 460-ական թուականների սկիզբը, 451 թուականի Վարդանանց պատերազմի մասին չի գրել՝ որպէս Վասակ իշխանի քաղաքական արեւելումի կողմնակից լինելուն ու Մամիկոնեանների տոհմին ու կղերին չհակադրուելու համար: Ղազար Փարպեցի, «Հայոց Պատմութիւն», թուղթ Վահան Մամիկոնեանին», Վահան Մամիկոնեանի խնդրանքով երկնած՝ Հայոց աշխարհի տուեալ ժամանակի ու ազմական ու քաղաքական դեպքերի մասին եւ Հայոց աշխարհը երկուտէրութիւնների միջեւ բաժանման ժամանակներից մինչեւ Վահան Մամիկոնեանի մարզպատութեան շրջանը: Սրբոց թարգմանչաց գործունէութեան ժամանակահատուածը համարուել որպէս Հայոց մշակույթի «Ոսկեղար»:



# ARMENIAN COUNCIL OF AMERICA

Political Action Committee

## NOV. 3.2020 ENDORSEMENTS VOTE FOR

### PRESIDENT



**Joseph Biden**

### U.S. SENATE



Jack Reed  
Rhode Island

Dick Durbin  
Illinois

Sara Gideon  
Maine

John Hickenlooper  
Colorado



Christopher Coons  
Delaware

Ed Markey  
Massachusetts

Mark Warner  
Virginia

Jaime Harrison  
South Carolina

### UNITED STATES HOUSE OF REPRESENTATIVES



Jackie Speier  
CA - CD 14

Jim Costa  
CA - CD 16

Anna Eshoo  
CA - CD 18

Christy Smith  
CA - CD 25

Judy Chu  
CA - CD 27

Adam Schiff  
CA - CD 28

Tony Cardenas  
CA - CD 29

Alexandria Ocasio-Cortez  
NY - CD 14

Rashida Tlaib  
MI - CD 13

Brad Sherman  
CA - CD 30

Grace Napolitano  
CA - CD 32

Ted Lieu  
CA - CD 33

Jimmy Gomez  
CA - CD 34

Karen Bass  
CA - CD 37

Linda Sanchez  
CA - CD 38

Lucille Roybal-Allard  
CA - CD 40

Frank Pallone  
NJ - CD 6

Gus Bilirakis  
FL - CD 12

### CA STATE ASSEMBLY



Luz Rivas  
AD 39

Chris Holden  
AD 41

Laura Friedman  
AD 43

Jesse Gabriel  
AD 45

Adrin Nazarian  
AD 46


### CA STATE SENATE



Scott Wilk  
District 21

Anthony Portantino  
District 25

### LOS ANGELES COUNTY



Herb Wesson Jr.  
for County Supervisor District 2

### LOS ANGELES CITY COUNCIL



David Ryu  
L.A. Council District 4



Paid for by the  
Armenian Council of America-PAC  
1060 N. Allen Ave Suite 210  
Pasadena, CA 91104